ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ANQA-2025/138

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հուլիսի 2025 թ. N 138

«ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՍՊԸ-Ի ՔՈԼԵՋԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ «Հյուսիսային համալսարան» ՍՊԸ-ի քոլեջ

Գործունեության հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Ա. Մանուկյան 15/9, ՀՀ Լոռու մարզ, ք. Ալավերդի Մայաթ-Նովա 3

Նախորդ հավատարմագրման մասին որոշումը և ժամկետը՝ չի ունեցել

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով (այսուհետ՝ Հավատարմագրման կարգ), «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2025 թվականի հուլիսի 11-ին Հավատարմագրման Հանձնաժողովի նիստում քննարկեց **«Հյուսիսային համալսարան» ՍՊԸ-ի քոլեջի** (այսուհետ՝ քոլեջ, ՄՈՒՀ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում

դիմում-հայտի ներկայացում՝ 13 մայիսի 2022թ.

վերանայված ինքնավերլուծության ներկայացում՝ 04 դեկտեմբերի 2024 թ.

փորձագիտական այցի իրականացում՝ 12-14 մարտի 2025 թ.

փորձագիտական զեկույցի ներկայացում՝ 20 մայիսի 2025թ.

թերությունների վերացման նախնական ծրագրի ներկայացում՝ 24 հունիսի 2025 թ.

ՄՈՒՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.

- **Արմենուհի Սարգսյան՝** ֆիզմաթ գիտությունների թեկնածու, դոցենտ, Շիրակի պետական համալսարանի դասախոս, գիտական նախագծերի անդամ, փորձագիտական խմբի ղեկավար:
- **Գոհար Մկրտչյան՝** բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, Հայկական բժշկական ինստիտուտի Հայոց լեզվի և օտար լեզուների ամբիոնի վարիչ, Կրթության որակի ապահովման կենտրոնի ղեկավար, փորձագիտական խմբի անդամ:
- **Անահիտ Արշակյան՝** «Մարտունի» բժշկական կենտրոնի մանկաբույժ, Մարտունու պետական բժշկական քոլեջի ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ, փորձագիտական խմբի անդամ:
- **Անգելինա Տոնոյան՝** Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի «Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝օտար լեզվի խորացված իմացությամբ» մասնագիտության ուսանող, փորձագիտական խմբի ուսանող անդամ:

Փորձաքննությունն իրականացվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով: Գնահատման արդյունքներն են.

Չափանիշ	Եզրակացություն
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում ու վարչարարություն	Չի բավարարում
3. Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարարում է
4. Ուսանողներ	Բավարարում է
5. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարարում է
6. Հետազոտություն և զարգացում	Չի բավարարում
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարարում է
8. Հասարակական պատասխանատվություն	Բավարարում է
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Բավարարում է
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Չի բավարարում

Հանձնաժողովը, ուսումնասիրելով քոլեջի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջի դիտարկումները, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների նախնական ծրագիրը, լսելով քոլեջի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երկու անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

I. **Քոլեջում առկա են բարելավման կարիք ունեցող ուղղություններ, որոնք վերաբերվում են որակավորումների արժանահավատ շնորհման գործընթացին:**

Քոլեջում կրթական ծրագրերը մասնակիորեն ապահովում են գործնական հմտություններով և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան շրջանավարտների պատրաստում: Կրթական ծրագրերի արդյունավետ իրականացման համար խորհուրդ է տրվում մշակել կրթական ծրագրերի բարելավման ռազմավարություն, որը կհիմնվի աշխատաշուկայի պահանջների, բենչմարքինգի արդյունքների և ուսանողների վերջարդյունքների ձեռքբերման

վրա, սահմանել գործնական հմտությունների ձևավորման և գնահատման հստակ չափորոշիչներ, վերանայել դասախոսական կազմի համալրման պահանջները՝ ապահովելով համապատասխանությունը մասնագիտացման ոլորտին, ներդնել սկսնակ դասախոսների մենթորության և գործող կազմի պարբերական վերապատրաստման համակարգ, ներդնել ռեսուրսների զարգացման պլան, որը կներառի նյութատեխնիկական հագեցվածության թարմացում՝ ապահովելով կրթական ծրագրերի արդյունավետ իրականացում:

II. Ռազմավարական կառավարումն ու որակի ապահովման համակարգը ձևավորման փուլում են, առկա են բարելավման ուղղություններ՝ ապահովելու արդյունահենք կառավարում:

Քոլեջում արդյունահենք կառավարման համակարգը դեռևս ձևավորման փուլում է: Չնայած առկա են ռազմավարական փաստաթղթեր և գործողությունների պլաններ, դրանց իրականացումը դժվարանում է, քանի որ կառավարման կառուցվածքը և պատասխանատվությունների բաշխումը հստակ սահմանված չեն: Սա հիմնականում պայմանավորված է նրանով, որ քոլեջի գործառութային կառավարման համակարգը միաձուլված է բուհական կառավարմանը, ինչի հետևանքով մասնագիտական կրթության կազմակերպման, պլանավորման և վերահսկման գործընթացներն անկախ չեն: Տվյալների հավաքագրումն ու վերլուծությունը չեն իրականացվում քոլեջի մասով առանձին, իսկ որակի ապահովման համակարգը չի համապատասխանում քոլեջի կրթական մակարդակի առանձնահատկություններին: Խորհուրդ է տրվում իրականացնել քայլեր քոլեջի ռազմավարական և ֆինանսական անկախության ուղղությամբ՝ նախատեսելով առանձին զարգացման առաջնահերթություններ, միջոցառումներ և բյուջետային պլանավորում, ներդնել տվյալահենք կառավարման և հաշվետվողականության հստակ մեխանիզմներ, վերանայել որակի ապահովման համակարգի կազմակերպման ձևաչափը՝ այն համապատասխանեցնելով քոլեջի կրթական առանձնահատկություններին և ապահովելով գործընթացների պլանավորվածություն, համակարգվածություն և հետադարձ կապի գործնական կիրառում:

III. Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը դեռևս չեն աջակցում որակավորումների արժանահավատ շնորհմանը

Քոլեջի արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացները հիմնականում իրականացվում են համալսարանի նախաձեռնությամբ և չեն տարանջատվում քոլեջի մակարդակում: Քոլեջը չունի առանձին քաղաքականություն կամ ծրագրային պլանավորում՝ միջազգային համագործակցությունների, շարժունության և օտարերկրյա ուսանողների ներգրավման ուղղությամբ: Օտար լեզվի իմացության բարելավման քայլերը կանոնավոր չեն, լեզվահմացության մակարդակի գնահատում և զարգացման նպատակային ծրագրեր առկա չեն: Հետազոտական բաղադրիչը սահմանափակ է ինչպես ուսումնական ծրագրերում, այնպես էլ ուսանողների և դասախոսների գործունեության մեջ: Չկան հստակ հետազոտական առաջնահերթություններ, մեթոդական ուղեցույցներ և խթանման մեխանիզմներ: Խորհուրդ է տրվում մշակել միջազգայնացման առանձին ռազմավարություն՝ հենված քոլեջի մասնագիտական առանձնահատկությունների վրա, իրականացնել օտար լեզվի իմացության մակարդակի գնահատում և բարելավման ծրագիր, սահմանել հետազոտական զարգացման ուղղություններ և ապահովել ուսանողների ու դասախոսների ներգրավում՝ համապատասխան մեթոդական և կազմակերպական աջակցությամբ, տարանջատել քոլեջի արտաքին կապերի և հետազոտական գործունեության կառավարման գործառույթները համալսարանից՝ հաշվի առնելով մասնագիտական կրթության առանձնահատկությունները:

4. Թերությունների վերացման ծրագրում անհրաժեշտ է նախատեսել վերը նշված բացերի լուծմանն ուղղված առաջնահերթ գործողություններ՝ ապահովելով նաև հնարավոր ռիսկերի կանխարգելման և կառավարման համապատասխան միջոցառումներ:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

«Հյուսիսային համալսարան» ՍՊԸ-ի քոլեջին շնորհել 4 /չորս/ տարի պայմանով ինստիտուցիոնալ հավատարմագրում՝ 2 տարի հետո իրականացնելու փորձաքննություն:

1. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել քոլեջի Կառավարման խոհրդի կողմից հաստատված փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց:
2. Թերությունների վերացման ծրագրում նախատեսել I, II և III կետերում նշված խնդիրների առաջնահերթ լուծմանն ուղղված գործողություններ՝ ապահովելով հնարավոր ռիսկերի կանխարգելման և կառավարման համապատասխան մեխանիզմներ:
3. Կազմակերպել բոլոր կրթական ծրագրերի ներքին աուդիտ մինչև հաջորդ հավատարմագրման ժամկետը:
4. Հավատարմագրման կարգի 12.1 կետի պահանջներին համապատասխան 2 տարին մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով հաստատության գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները: Գնահատման արդյունքները քննարկել քոլեջի կառավարման խորհրդում:
5. Հանձնարարել ՈԱԱԿ-ին մեկ տարի հետո պարտադիր մշտադիտարկման ենթարկել քոլեջի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի նախագահ **Վ. Գաբրիելյան**

2025 թ., հուլիսի 11